ԵՐՈՒԱՆԴ ՔՈՉԱՐԸ ԵՐԳԻՉԱՆԿԱՐԻՉ

ԱՐՄՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ

Այն, որ Երուանդ Քոչարը (1899-1978) գեղանկարիչ, գծանկարիչ, քանդակագործ, թատերական նկարիչ եւ ենկարչութիւն տարածութեան մէջ արուեստի նոր տեսակի ստեղծող լինելուց բացի, երգիծանկարիչ է եղել՝ մինչեւ այժմ գրեթէ անյայտ է մնացել։ Նրան նուիրուած արուեստաբանական աշխատութիւններում ոչ մի յիշատակութեան չենք հանդիպել այդ փաստի վերաբերեալ[1]։ Երեւանի Նկարչի Տանը 1978ին կազմակերպուել է Քոչարի գծանկարչական աշխատանքների ցուցահանդէսը, որից սակայն դուրս են մնացել նրա երգիծանկարները։ Պատճառը միանգամայն հասկանալի է. Քոչարի հրատարակած երգիծանկարները եղել են առօրէական ստեղծագործութիւններ, ծնուել եւ «մահացել» են տպագրուած թերթի հետ մէկտեղ եւ առ այսօր «բանտուած» են մնացել խունացող մամուլի էջերում[2]։

Քոչարի երգիծանկարչական գործունէութիւնը կապւում է նրա կեանքի փարիզեան շրջանի (1923-1935) հետ, երբ նա Ֆրանսիայի մայրաքաղաքի հայ մամուլում գրեթէ մէկ տասնամեակ շարունակ (1923-1932) ժամանակ առ ժամանակ հանդէս է եկել երգիծանկարներով։

Մինչեւ այժմ Քոչար երգիծանկարչի վերաբերեալ եղել է երկու-երեք թուղթիկ վկայակոչում։ Հայկական Սովետական Հանրագիտարանը վկայել է, որ կազմաւոր քաղաքական եւ երգիծական թերթի աշխատակիցներից է եղել նաեւ նկարիչ Երուանդ Քոչարը։ Ոգնի երգիծաթերթում 1979ին վերահրատարակուել է երեք երգիծանկար նոր մահացած նկարչի արխիւից[4]։ Դրանցից մէկն իբր պատկերում է Ֆրանսահայ երգչուհի Աիդա Ազնաւուրեանին եւ ստեղծուել է 1930ականներին։ Միւսը Ֆրանսահայ գրող Լասի (Աւետիս Ալանեան, 1906-1945) գրական կերպարներից է, ստեղծուած 1930 կամ 1931ին։ Երրորդ երգիծանկարը երկմասանի է՝ ջրի ծորակը բացած ծեր կին եւ առատաղից թափուող ջուրը հաւաքող երեխայ։ Այս վերջինը ուշ շրջանի գործ է, որի բնօրինակը պահւում է Քոչարի տուն-թանգարանի Ֆոնդում։ Վերջին երկու նկարները հաւանաբար տպագրուել էին առաջին անգամ, իսկ առաջինն իրականում ստեղծուել էր ոչ թէ 1930ականներին, այլ 1928ին՝ հրատարակուելով Փարիզում լոյս տեսնող Կազմաւոր երգիծաթերթում[5]։ Իսկ պատկերուած երգչուհին չէր կարող լինել Աիդա Ազնաւուրեանը (որը 1928ին ընդամէնը վեց տարեկան էր)։ Կազմաւորում հրատարակուած նկարի ազդագիրը վկայում է, որ այնտեղ պատկերուած է «Հայ թատրոնի ֆ՝ն համալիր դերասանուհին՝ տիկին Աստղիկ որ հայ

թատրոնի աստղն է եւ այժմ Պոլիս կը գտնուի հայերէն ներկայացումներ տալու համար։ Խօսքը վերաբերում է դերասանուհի Աստղիկ Երամեանին (1897-1961)։

Երրորդ վկայութիւնը Քոչարի երգիծանկարչութեան վերաբերեալ առնչւում է 1995ին Քոչարի տուն-թանգարանում բացուած Վահան Թէքէեանին նուիրուած ցուցահանդէսին։ Այս տուֆիւ ամերիկահայ Նոր Օր թերթում վերահրատարակուել է 1923ին Թէոդիկի Ամէնուն Տարեցոյցում (էջ 197) հրատարակուած Թէքէեանին պատկերող Քոչարի երգիծանկարը։

«Ժողովրդի Ձայնի» խմբագրատան մէջ.-Ո՞Վ Է...

1920ականների Ֆրանսահայ մամուլը թերթելիս մենք յայտնաբերեցինք Քոչարի ստորագրութիւնը կրող տասնեակ երգիծանկարներ, որոնք

կազմում են արուեստագէտի կենսագրութեան մի էջը եւ որոնց ուսումնասիրումը կարող է օգտակար լինել նկարչի արուեստի (յատկապէս գծանկարչական ժառանգութեան) ինչ-ինչ մասնայատկութիւններ քննելիս։ Սոյն յօդուածն առաջին փորձն է՝ ընդհանուր գծերով բնութագրելու Երուանդ Քոչար երգիծանկարչին։

«Մարէյլի մէջ եպիսկոպոս մը եւ երկու տէրտէր ծեծեր են ուրիշ տէրտէր մը»։

ԹԵՐԹԵՐԸ

«ՍԻՐԵՑԷՔ ԶՍԻՍԵԱՆՆ» ԸՍԱՒ ՅԻՍՈՒՍ...ՊԱՐԱՊ ՏԵՂ։

Հայ լրագրական երգիծանկարչութեան սկիզբը համարւում է 1858 թուականը՝ կապուած Կոստանդնուպոլսի Զուարճաւէր պարբերականում յոյժ տեսած հայ նկարիչների երգիծանկարչական առաջին փորձերի հետ։ Երգիծանկարչութիւնն արեւմտահայ իրականութեան մէջ լայնօրէն զարգացել է առանձնապէս 1908թց յետոյ, երբ հռչակուել է մամուլի ազատութիւն եւ պոլսահայ մի շարք պարբերականներում տպագրուել են բազմապիսի երգիծանկարներ՝ քաղաքական եւ կենցաղային բնոյթի պատկերներ ու երգիծանկարչական դիմանկարներ։ Խօսքն առաջին հերթին վե-

բաբերում է նաև. Պոլսի Կամուրջ երգիծաթերթին (հրատարակիչ՝ Երուանդ Թոլայեան, 1883-1937), որտեղ յետագայում տպագրուել է Քոչարի երգիծանկարների մեծ մասը։ Չի բացառուում, որ Քոչարին աշխատակցելու հրաւէրն արած լինի ինքը՝ Կամուրջի հրատարակիչ Թոլայեանը։ 1908ին հիմնուած այս պարբերականը 1928ից սկսել է լոյս տեսնել Փարիզում եւ շարունակուել մինչեւ 1938։ Այն չի եղել սոսկ Ֆրանսահայութեան զուարճանքի թերթ, այլ ներկայացրել է նաեւ միջազգային անցուդարձը, սփիւռքահայ կարեւոր լուրերը եւ մշակութային նորութիւններ։ Կամուրջն ունեցել է երգիծանկարչական հարուստ աւանդներ։ Տակաւին 1909ից այս թերթում բազմիցս հրատարակուել են Արամ Անտոնեանի երգիծապատկերները, իսկ Ֆրանսիայում տպագրուելու տարիներին տարբեր ժամանակներում երգիծանկարներով աշխատակցել են նաեւ Վ. Տատրեանը (1900-1948), Գառնիկ Զուրմեանը (ապագայ Գառզուն, 1907-2000)[9], Պ. Տոսագեանը, Մելքոն Քեպապճեանը (1880-1949), Միշել Ցովիկեանը (1911-)։ Տպագրուել են եգիպտահայ նշանաւոր երգիծանկարիչ Աղեքսանդր Սարուխանի (1898-1977) գործերից, ինչպէս նաեւ կատարուել են արտատպումներ՝ Ֆրանսիական մամուլից։ Միաժամանակ հարկ է նկատել, որ 1920-30ականները բուն իսկ Ֆրանսիական երգիծանկարչութեան համար զատորոշւում են որպէս քաղաքական սատիրայի տիրապետման ժամանակաշրջան, երբ երգիծանկարներ սկսել են տպագրել բոլոր թերթերը՝ թէ՛ քաղաքական եւ թէ՛ այլ բնոյթի։ Երգիծանկարը դարձել է ամէնօրեայ լրագրի անհրաժեշտ տարրը։[10] Ասուածը ճշմարիտ է ոչ միայն Ֆրանսիական, այլեւ Ֆրանսիայի հայ մամուլի համար։

Առաջին անգամ Քոչարի ստորագրութեամբ երգիծանկար հրատարակուել է Թէոդիկի 1923 թուականի Ամէնուն Տարեցոյցը տարեգրքում։ Պատկերուած է թղթերի կոյտի մէջ նստած գրող մի մարդ, իսկ մակագրութիւնը հարցնում է. «Ժողովուրդի Քայլքի խմբագրատան մէջ.-Մ՞վ է...»։[10] Անմիջապէս ճանաչւում է, որ պատկերուածը Վահան Թէքէեանն է, որն այդ տարիներին Պոլսում խմբագրել է Ժողովուրդի Քայլը-ժամանակ թերթը։

Փաստօրէն, Քոչարը Փարիզ հաստատուելու առաջին իսկ տարում՝ 1923ին, արդէն երգիծանկարով հանդէս է եկել տեղական պարբերականում։ Սա մեզ կարող է յուշել, որ մինչեւ Ֆրանսիա գալը երիտասարդ նկարիչն արդէն պիտի փորձած լինէր այդ ժանրը։ Թէ ի՞նչն է մղել Քոչարին երգիծանկարներով հանդէս գալ մամուլում՝ դժուար է միանշանակ պատասխան տալ։ Մենք կարծում, թէ եղել է նիւթական շահագրգռութիւն, որը կարող էր ստիպել Փարիզում կարիքի մէջ ապրող Քոչարին դիմել այդ ժանրին, քանի որ դժուար թէ նիւթական սուղ միջոցներ ունեցող հայ մամուլն ի վիճակի լինէր վճարել աշխատակիցներին։ Պարզապէս Քո-

չարը, որպէս փարիզահայ հասարակական-մշակութային կեանքին մօտ կանգնած անձնաւորութիւն, չէր կարող չաջակցել աշխատակիցների պակաս ունեցող ժամանակի հայ մամուլին։

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԸ ԵՐԱԶԸ

Եւ Ֆրանսայի հայ նոր սերունդը գունդագունդ կը դիմէ Սամուէլ-Մուրատ Մխիթարեան նոր վարժարանը՝ իր մայրենի բարբառը չմոռնալու համար:

Թոշարը, որի երգիծանկարները կրել են ԵԲ սկզբնատառերը, իսկ տակագրերում նրա ազգանունը գրուել է «Թօշարեան» կամ «Բօշարեան», առաջին անգամ Կահիրէում տպագրուել է 1927ի Սեպտեմբերի 6ի համարում։ Նա արդէն չորս տարի էր, ինչ բնակւում էր Փարիզում, մասնակցել էր ցուցահանդէսների եւ արդէն որոշ համբաւ ունէր հայկական շրջանակ-

ներում։ Մեր հաշումներով, Կաֆէաշում 1927ին լոյս է տեսել Քոչարի ստորագրութեամբ 10 երգիծանկար եւ մտերմական շարժ, 1928ին՝ 4, 1929ին՝ 12, 1930ին՝ 3, 1932ին՝ 1 երգիծանկար (ընդհանուր թուով՝ 30)։ Իսկ Ապագայում[11] 1928ին Քոչարը հրատարակել է չորս երգիծանկար։ Բանաստէր Գառնիկ Ստեփանեանի աշխատութիւններից մէկում ընդգրկուել է բանաստեղծ Յովհաննէս Զարիֆեանին (1879-1937) պատկերող քոչարեան մտերմական շարժը՝ առանց աղբիւրը նշելու[12]։ Այսպիսով, եթէ հաշուի առնենք նաեւ Ոգեմում լոյս տեսած երկու երգիծանկարները, մինչեւ այժմ մեզ յայտնի է Քոչարից հրատարակուած 36 երգիծապատկեր։ Անշուշտ, չի բացառւում, որ մեր աչքից վրիպած լինեն այլ պարբերականներ, որոնցում լինեն երգիծանկարներ Քոչարից։ Երեւանի գրադարաններում մենք չգտանք Կաֆէաշ տարեգրքի համարներ, որոնցում շատ հաւանական է, որ լինեն Քոչարից երգիծանկարներ։ Իսկ եթէ Ֆրանսիայում պահպանուած լինեն Կաֆէաշի եւ Ապագայի արխիւները, ապա հնարաւոր է, որ պահպանուած լինեն Քոչարի այդ նկարների բնօրինակները։

Երգիծանկարչութեան մէջ տարբեր խնդիրներ են յուզել Քոչարին։ Նա հիմնականում պախարակել է հայ հասարակական կեանքի արատները։ Քոչարը ձաղկել է կրօնաւորներին, հրատարակել «Միրեցէք զմիմեանս» վերտառութեամբ երկու երգիծանկար (Կաֆէաշ, 5.08.1928 եւ Ապագայ, 10.10.1928)։ Երկուսում էլ պատկերուած են կռուի մէջ մտած հոգեւորականներ, որոնց վարքի վրայ զարմացած է անգամ ինքը՝ խաչեալ Յիսուսը։ Այս դէպքը միակն է, որի ստեղծման շարժառիթը նշուած է. նկարին կից ծանուցումը վկայում է, որ թերթերը գրել են, թէ ինչպէս «Մարսէյլի մէջ եպիսկոպոս մը եւ երկու տէրտէր ծեծեր են ուրիշ տէրտէր մը»։ Եւ նկարչի եզրակացութիւնը. «Միրեցէք զմիմեանս ըսաւ Յիսուս... պարապ տեղ»։ Ի դէպ, նամակագրական տուեալներից իմանում ենք, որ այս երգիծանկարները Քոչարը ստեղծել է իր մտերիմ բարեկամ Արշակ Չօպանեանի պատուէրով[13]։ Սա մեզ յուշում է, որ միւս երգիծանկարների մի մասի թեմատիկան եւս յուշած կարող էին լինել ուրիշները...։

Մէկ այլ երգիծանկարում պատկերուած է բազկաթոռին նստած մի նիրհող կրօնաւոր. Մխիթարեան վարդապետը սին երազներ ունի, թէ Ֆրանսիահայ նոր սերունդները գունդագունդ պիտի դիմեն Սամուէլ-Մուրատ Մխիթարեան նոր վարժարանը՝ «մայրենի բարբառը չմոռնալու համար» (Կաֆէաշ, 27.01.1929)։ Անտեղի չէր Քոչարի հեգնանքը. կեանքը ցոյց տուեց, որ Ֆրանսիայի պէս երկրում հայ նոր սերունդները պիտի ուծանային, եւ Մխիթարեան վարժարանը տասնամեակներ անց պիտի փակուէր։

Կարծում ենք, բաւական յաջող է հոգեւոր գործիչներ Պալաքեանին եւ Քիպարեանին պատկերող երգիծանկարը, որտեղ այս գործիչները ներկա-

յացուած են իրենց ժամանցին՝ ճօճատախտակին նստած՝ «տանկալափիշ-տին» խաղալիս (Կայծակ, 4.09.1927)։

ԱՆՏԵՂԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆ

- Պ. Պօղոս, հայկական ներկայացմա՞ն կ՚երթաք:
- Մօն չէռ, նախ իմ անունս Փոլ է, յետոյ հայերէն չեմ հասկնար, յետոյ մենք պ ա լ կ՚երթանք:

Երիտասարդ նկարչի երգիծանքի թիրախ են դառնում հայութեանը ընորոշ այնպիսի թերութիւններ, որպիսիք են օտարամոլութիւնը եւ չէզոք դիրքորոշումն ազգային խնդիրների հանդէպ։ Անհոգ հարուստը, բազկաթոռին բազմած, դրամ է գցում գանձանակի մէջ՝ ասելով. «Լուսաս կու տամ, ամէնքին հետ կ՚ուզեմ աղեկ ըլլալ, ինչ կ՚ուզէ թող ըլլայ, այն դէպքում, երբ շուրջը տուրուզմփոց է (Ազագայ, 17.11.1928)։ Պարոն Պօղոսը, որ իրեն Փոլ է յորջորջում, հայկական ներկայացման չի գնում՝ այլ միայն «Պարտ (Ազագայ, 3.11.1928)։ Հայրը նստած ծովից ծով Հայաստանի քարտէզն է գծում, իսկ նրա զուստրը լայիս է. հայրն ուշադրութիւն չի դարձրել իր այն խօսքին, թէ գնում է մագերը «օնտուլասիոն» անելու (Կայծակ, 3.03.1929)։

- Հայրիկիս ըսի որ մազերս *օմտիլասիօն* ընելու պիտի երթամ, զիս քովն ճամբեց:
- Ձգէ՛, աղջի՛կս, հայրիկդ հիմա զբաղած է ծովերէ ծով անկախ եւ միացեալ Հայաստանի բարեյիշատակ քարտէզին վրայ խոկալու:
- Բայց իմ *օմտիլասիօ՞ն*...:

Քոչարին չէր կարող չանհանգստացնել նաեւ մտաւորականի, արուեստագէտի վիճակը: Մի նկարում բանաստեղծը հրատարակչին է բերում մի քանի կապոց ձեռագիր եւ անմիջապէս մերժում ստանում (Կակռոչ, 27.01.1929): Մէկ այլ երգիծանկարում հայ բարերար տիկնոջ մօտ մի խումբ նկարիչներ նկարներ են բերում վաճառքի: սպասաւորը նրանց դրամ է տալիս, խնդրելով այլեւս չգալ, քանի որ Հիսհանոցի պատերը անգամ թապլոյով ծածկուեցան» (Կակռոչ, 27.01.1929): Այս նկարի ստեղծումն անշուշտ կապուած է անձնական փորձառութեան հետ: յուշագրական զրականութիւնից յայտնի է, որ նիւթական դժուարութիւնների մէջ գտնուող Քոչարը երբեմն ինքն իր նկարներն առաջարկել է հարուստներին, ինչպէս՝ Պօղոս Նուբար փաշայի քրոջը[15]:

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ.- Պ. հրատարակի՛չ, եթէ կ՚ուզէք նոր տաղանդ մը փրկել, կարդացէ՛ք սա ձեռագիրներս եւ հրատարակեցէք բոլորը:

ՀՐԱՏԱՐԱԿԻՉԸ.- Հայտէ, պարո՛ն, ինձի կարդացնելէ առաջ, տուն գնա՛, ինքզինքդ կարդացո՛ւր:

Երգիծանկարներում եւ որմազդում առաւել, քան նկարչութեան որեւէ այլ ժանրում բացայայտւում են նկարչի համոզմունքները, քաղաքական դիրքորոշումը։ Քոչարի երգիծանկարներում քաղաքական մոտիւներ գրեթէ չկան, բացառութիւն է «Ի՞նչպէս ս գեղարուեստը կը բարձրացնենն մակագրութեամբ նկարը։ Թշուառական մէկի կախաղան է հանում մի գինուոր, որի աղաւաւարին մուրճ եւ մանգաղ է պատկերուած (Կաֆոշ, 3.03.1929)։ Քոչարի ակնարկը պարզ է. խորհուրդների երկրում 1920ականներին իսկական արուեստը կախաղան էր հանւում։

Աւելի մեծ է թիւը կենցաղային բնոյթի երգիծանկարների։ Դրանց մեծ մասը կարծես անեկդոտի պատկերազարդում լինեն, քանի որ դրանցում առաւել կարեւոր է ոչ թէ պատկերը, այլ խօսքը։ Տպաւորութիւնը յաճախ այնպիսին է, կարծես Կաֆոշի եւ Ապագաչի շատ երգիծանկարներ ստեղծուել են էջում բաց մնացած մասերը ծածկելու համար։ Օրինակ, մի գէր կին, նայելով ծաւին նստած թռչունին ասում է. «Երանի թէ թռչուն մը ըլ-

լայի եւ սա բլուրին վրայ թառէիր», որին՝ նրա նիհարակազմ ամուսինը պատասխանում է. «Ի՞նչ աղեկ կ'ըլլար...Բայց եկու՛ր նայէ որ կին ես եւ բլուրի տեղ ի՞մ վրայ ես թառեր» (Կաֆռոշ, 4.09.1927)։ Մէկ ուրիշ նկարում մի գէր պարոն գիւղ է մեկնում նիհարելու, իսկ նիհար օրիորդը նոյնն անում է գիրանալու նպատակով (Կաֆռոշ, 10.08.1927)։

Ի՞նչպէ՞ս գեղարուեստը ԿԸ ԲԱՐՁՐԱՑՆԵՆ

Կարծում ենք, Քոչարի ամենասրամիտ երգիծանկարը հայազգի նշանաւոր ֆաքիր Թահրա բէյին (Գրիգոր Գաբֆայեան) պատկերող նկարն է։ 1920ականներին Եւրոպայի մի քանի քաղաքներում իր զարմանահրաշ

փոքրերով միլիոնների վրայ մեծ ապաւորութիւն թողած այս ֆաքիրը պատկերուած է բեմի վրայ մի հանդիսականի վրայ փոքր կատարելիա։ Նա բացել է հանդիսատեսի որովայնը. վերջինս նրան խնդրում է որովայնը փակելուց առաջ հանել իր կոյր աղիքը (Գագոշ, 21.01.1929)։ Այստեղ Քոչարի հումորը մօտիկ է իր անուանակից հայ մեծ երգիծաբանի՝ Օտեանի հումորին, որը նոյն Թահրա բէյի առթիւ գրել էր, թէ հայ ֆաքիրը լաւ կ'անէր ապանոնությունը եւ հողում թաղուելուց յետոյ նորից կենդանանալու իր կարողութիւնն ուսուցանէր հայրենակիցներին՝ փրկուելու համար Եղեռնից...

ԹԱՀՐԱ ՊԷՅ.- Ահա՛, կը տեսնէք, ձեր ամէնուդ այչքին առջեւ, փորը կը բանամ, աղիքները կը քակեմ եւ նորէն տեղերնին կը դնեմ:

- Գուզո՛ւմ Թահրա պէյ, անանկ ալ փորս բացիր, անակ ալ, սա աբանդիսիդս ալ հանէ տէ՝ անանկ փորս գոցէ՝:

Քոչարը հեղինակ է նաեւ մոնթմական շարժերի։ Նրա երգիծական մասը պատկերել է հիմնականում Ֆրանսաբնակ մի շարք հայ գործիչների. Արշակ Ջօպանեան (1872-1954) եւ Շաւարշ Մխաքեան (1878-1943),

Զապէլ Եսայեան (1878-1943) եւ Աննա Բուդաղեան (1880-1964), Լեւոն Բաշալեան (1868-1943) եւ Լեւոն Շանթ (1869-1951), Մարտիրոս Սարեան (1880-1972) եւ Փանոս Թերլեմեզեան (1865-1941)…։ Նրա շարժերը պատկերուած ենմեղմ հումորով, ներկայացուած անձի հանդէպ հեղինակը ցուցաբերում է բարեկամական-մտերմական վերաբերմունք։

ՏԻԿԻՆ ՊՈՒՏԱՂԵԱՆ
Հայ անուանի ռեժիսէօրը, որ ի մօտոյ Փարիզի մէջ պիտի կազմէ մեծ հայ թատերախումբ մը՝ 1.000.000 ֆրանք դրամագլուխով։

Շաւարշ Միսաքեան

Ինչպէս ընդունուած է առհասարակ երգիծանկարչութեան մէջ, մարդիկ Քոչարի երգիծանկարներում եւս օժտուած են ծիծաղաշարժ դէմքերով եւ խոշոր քթերով։ Սակայն Քոչարի մօտ յատկապէս նկատելի է մարդկանց ծուռ ոտքերով պատկերելու միտումը[16] (ինչպէս Սարեանը, դերասանուհի Աստղիկը, անանուն տաղանդաւոր հայ գրագիտուհին- ի դէպ, նոյն երեւոյթին հանդիպում ենք Սարուխանի եւ Տիգրան Աճեմեանի երգիծանկարներում)[17]։ Մենք հակուած չենք կարծել, որ նա այս ձեւին դիմել է պարզապէս վասն զուարճութեան. հաւանաբար նա դրանով ցանկացել է ընդգծել հայերի մէջ տարածուած այդ թերութիւնը, որի պատճառը, մասնագէտների կարծիքով, նորածիններին բարուրելու սովորոյթն է։



ԶԱՊԵԼ ԵՍԱՅԵԱՆ

Երբ կը խօսէր Մշակոյթի Երեկոյթին մէջ, Շանթի հովանաւորութեան տակ:

Քոչարի երգիծանկարները պատկերուած են հիմնականում խոշոր պլանով, աչքի են ընկնում թաւ գծերով եւ նկարչական տեխնիկայի առումով առաւելապէս լիշեցնում են արուեստագէտի փարիզեան հեպանկար-

ների գծելակերպը։ Երկու երգիծանկարում արձաններ նկարելու կերպն անմիջապէս յուշում է քոչարեան ծանօթ ոճը (յատկապէս խոշոր կզակով արձանի դէմքեր պատկերելիս)։ Քոչարի ուրոյն ոճն է նկատելի նաեւ կզակին յենած ձեռքի պատկերման մէջ (Ֆաֆուօշի 1927ի Մեպտեմբերի 9ի երգիծանկարում)։

Հայ Գաղթականաց Ցանցնաժողովի Նախագահ եւ "Le Foyer"ի խմբագիր Պ. ԼԵՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ, նրբին գրագէտ եւ հմայիչ causeur, որ հայկական նուազագոյն եւ առաւելագոյն պահանջներուն շունչ եւ օդ ներարկելով՝ կեանք կուտայ անոնց Ազգերու Ժողովին մէջ։

Քոչարի երգիծանկարները որոշ ընդհանրութիւններ ունեն նոյն ժամանակահատուածում նրա կատարած գծանկարչական այլ աշխատանքների հետ։ Ահա արուեստագիտի գնահատականը 1920ականների քոչարեան գծանկարի վերաբերեալ. «Գծերը մերթ թեթեւ են, նրբագեղ, մերթ եռանդուն, հիւթեղ։ ...Քոչարը ուրուանկարը գծում է լակոնիկ ու վիրտուոզ։...Ուրուանկարների բեկբեկուն, կոտրակուած գծերում անգամ ընթերցում է ծաւալի չընդմիջուող երգայնութիւնը, նրա իրական կոնա-

Նշանաւոր հայ նկարիչ
ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵԶԵԱՆ

տրուկցիան»[18]։ Նոյն հեղինակը, անդրադառնալով Քոչարի ժանրային պատկերներին, իրաւամբ գտնում է, որ շատ մեծ է դրանց նշանակութիւնն «Իրրեւ արուեստագէտի աշխարհընկալման զարգացման աստիճան»[19]։

Կարծում ենք, սխալուած չենք լինի, եթէ ասենք, որ ատուածը ճշմարիտ է նաեւ Քոչարի երգիծանկարչութեան վերաբերմամբ։

Ժամանակակիցները չեն զլացել գնահատանքի խօսքեր ասել Քոչար երգիծանկարչի մասին։ Ըստ Զօպանեանի, «...ինքը Պ. Ա. Սարուխանին հետ՝ մեր ամէնէն հզօր ծաղրանկարիչն է»[20]։ Աւետիք Իսահակեանն էլ «Գիտէր Քոչարի հնարաւորութիւնների անսահմանութիւնը գեղարուեստի բոլոր ժանրերում. լինէր գծագրութիւն, ծաղրանկար, փորագրութիւն, նկարչութիւն թէ քանդակ» (ընդծումը մերն է - Ա.Բ.)[21]։ Այնուամենայնիւ, Քոչարը երգիծաբան չէր։ Նրա երգիծանկարներն առանց խօսքի զուրկ են հումորից եւ երգիծանքից։ Մինչդեռ երգիծաբան գծանկարիչների մօտ կարեւորը պատկերի երգիծական ազաւորութիւնը հասնելն է։ Օրինակ, Ֆրանսացի նշանաւոր երգիծանկարիչ Օնորէ Դոմիէի (Honoré Daumier, 1808-1879) մօտ մակագրութիւնը մեծ դեր չէր կատարում եւ կարելի էր այն շրջանցել, քանի որ զաւեշտն ինքնին էր[22]։ Քոչարի ձեւաւորած կատակներն իսկ ժամանակի ընթացքում արագ հնացել են՝ կորցնելով ծիծաղաշարժ բնոյթը...։ Ուստիեւ այսօր Քոչարի երգիծանկարչական ժառանգութիւնն ունի առաւելապէս պատմական անուրանալի արժէք, որի շնորհիւ ամբողջանում է մեծատաղանդ արուեստագէտի եւ մարդու կերպարը։

ՏԱՌՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Տե՛ս՝ ՍԱՀՄ ժողովրդական նկարիչ Երուանդ Քոչար (Կատալոգ, կազմ. Գ. Խոսրովեան, «Երուանդ Քոչարի Գրաֆիկան» առաջաբանը՝ Յասմիկ Փիլիպոսեանի), Երեւան, 1979; Երուանդ Քոչար (Կատալոգ, կազմ. Գ. Խոսրովեան, ընդգրկում է Ռ. Զաքեանի եւ Հ. Իրզիկեանի յօդուածները), Երեւան, 1980։

[2] Մեծագրութիւն, յօդուածին վերջաւորութեան, իբրեւ յաւելուած կը հրատարակէ Գաղուոյի Տարեգիրքի 12րդ տարուան (Տպարան Մասիս, Փարիզ, 1929) թիւին մէջ լոյս տեսած եւ Քոչարի ստորագրութիւնը կրող բոլոր երգիծանկարները։

[3] Բախտիար Յովսէփեան, «Գաւառ», Հարիւրեակ Սովետական Հանրագիտարան, հատոր 5, Հայկական Սովետական Հանրագիտարանի Գլխաւոր Խմբագրութիւն, Երեւան, 1979, էջ 282։

[4] Մշակ, Երեւան, 1979, թ. 24, Դեկտեմբեր, 8։

[5] Գաղուոյ, Փարիզ, 22.07.1928, էջ 8։ Քոչարի երգիծանկարների հրատարակման տեղն ու թիւն։ Կը նշուի շարադրանքի մէջ։ Ի դէպ, 1920-29 շրջանի Ամենուն Տարեցոյցի հատորների մէջ Քոչարի ստորագրութիւնը կրող միակ երգիծանկարն է սա։

[6] Մանուել Գիսաքեան, «Լահան Թէքէեան, Գոչար եւ Գառզուն», Նոր օր, Լոս Անճելէս, 10.06.1985, էջ 9.

[7] Գառնիկ Սուխանեան, «Հայ Լրագրային Մաղրանկարչութեան Սկիզբը», Հայրենիք ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Տեղեկագիր, Հասարակական Գիտութիւններ, 1983, թիւ 3, էջ 85.

[8] Հաւանաբար Գառնիկ Զուլումեանը եւ Երուանդ Գոչարը ճանաչել են միմեանց այս շրջանից. յիշատակւում Գառզուն բարձր է գնահատել յատկապէս Գոչարի գծանկարչութիւնը, ասելով, որ «Մասնաւորապէս տպաւորուած եմ իր արուեստի գեղջկութենէն» (Գաղափ, «Երուանդ Գոչարի Հետ», Նոր Դար, Երեւան, 2000, թ. 1, էջ 244).

[9] V. V. Ourova, *Sovremennaya francuzskaya grafika: plakat, karikatura* (ժամանակակից Ֆրանսիական Գեղանկարչութիւն. Պլակատ, Երգիծանկար), Մոսկուա, 1966, էջ 108.

[10] Թէոդիկ, «Ամէնուն Տարեցոյցը», Փարիզ, 1926, էջ 13.

[11] Քաղաքական-հասարակական թերթ, որը լոյս է տեսել Փարիզում 1920-1950ականներին՝ ընդմիջումներով.

[12] Գառնիկ Սուխանեան, *Ակնարկներ Սովետական Թատրոնի Պատմութիւն*, Գիրք 1, Ցրտնաշունչ Թատրոն, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, Երեւան, 1982, էջ 188.

[13] Տե՛ս՝ մեր «Երուանդ Գոչար եւ Արշակ Զօպանեան» յօդուածը, Հարաստանի Հանրապետութիւն, 13.01.1998, էջ 6.

[14] Ֆրանսերէն ondulation՝ գանգրացում.

[15] Վիգէն Խաչատրեան, Հայրս, Երեւան, 2000, էջ 332.

[16] Ի դէպ, նոյն երեւոյթին հանդիպում ենք Սարուխանի երգիծանկարներում.

[17] Երուանդ Գարսեւանեան, «Տիրան Ամիտեան 1902-1991» Հայրապետական Հայրապետութիւն Հանդէս, Հա. ժէ., 1997, էջ 517.

[18] Փիլիպոսեան, էջ 8-9.

[19] Նոյն, էջ 9.

[20] Արշակ Զօպանեան, «Ս. Գոչարեան եւ «Զորրորդ Տարեաւերթը», Ազատամարտ, Փարիզ, 13.02.1929, էջ 2.

[21] Խաչատրեան, էջ 381.

[22] Տե՛ս՝ Եսայի Բոգէր, Բանաստեղծութիւն, Գեղարուեստաբանութիւն, Երեւան, 1999, էջ 220.

YERVAND KOCHAR AS A CARICATURIST
(Summary)

ARTSVI BAKHCHINIAN

The author sheds light on the caricatures of the famous 20th Century Armenian famous painter Yervand Kochar (1899-1978). Until now these caricatures have been overlooked in Kochar's creative artwork.

Kochar drew caricatures mainly in France during his stay in Paris from 1925-1935. His caricatures have been published in the *Kavrosh* satirical paper and other periodicals, alongside the caricatures of Carzou (1907-2000). In fact, the bulk of Kochar's caricatures, some 30 drawings in total, have been published in *Kavrosh*.

The caricatures touch on several areas, including lifestyle, the dire conditions of young Armenian intellectuals, and portraits of Armenian authors and painters.

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԵՐՈՒԱՆԴ ՔՈՉԱՐԻ ԵՐԳԻԾԱՆԿԱՐՆԵՐԸ
(ՔԱՂՈՒԱԾ *ԿԱՎՌՕՇԻ ՏԱՐԵԳԻՐՔԷՆ* 19ՐԴ ՀԱՏՈՐԷՆ)

Աղօթք մը.
-Եւ մտածե՞լ որ դատապարտուած եմ ամէ՛ն գիշեր այս անկողինը մտնալու... Աստուա՛ծ իմ, չպիտի՞ պատահի երբէք որ այս սենեակը մտած ատենս, կինս սիիրահարի մը թեւերուն մէջ գտնեմ:

-Իրա՞ն, այդ ապուշը իրր էրիկ պիտի առնե՞ս:
-Ի՞նչ ընեմ. սիրահարս չեմ կրնար ընել, բայց իրր ամուսին շատ ներկայանալի է:

ԻՆՉՊԷՍ ԿԸ ԼՕԼՕՉԵՆ
-Երիտասարդ չեմ, աղուտը չեմ, շիտակ ըսէ՝, իմ ի՞նչս կը սիրես:
-Համեստութիւն մ՚ըներ, գիտես որ տաքարիւն ես:

-Ի՞նչ բանի կը ծառայեն ժամանակացոյցերը, քանի որ թէնները միշտ յապաղումով կը հասնին:
-Ինչի՞ պիտի ծառայէին հապա սպասման սրահները, եթէ թէննները ժամը ժամին հասնէին:

–Մոտիվներդ չեմ հիմարում:

–Ինչպես չես հիմարում, երբ ամբողջ ցոցադրությունդ դրանցով է կառուցված: Դե, ինչպես ասում է Գոգոլը, «ամենուր ինչպես ինչպես»:

ԳՕՆՄԻՆԻՆԸ.- Մի, չ՛, մի՛ մի՛ մի՛

-Նայէ, նայէ, հրապարակաւ կը համբուրուին կոր:
-Ատիկա կը նշանակէ որ օր մը ալ հրապարակաւ պիտի ծեծկուին:

ԴԵՐԱՍԱՆԸ.- Մի՛ մերժեր իմ սէրս, անգո՛ւթ...
ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ.- Մի՜, ո՛չ, ո՛չ:
ՅՈՒՇԱՐԱՐԱԸ.- Էրկան ըրիք, վերջացուցէք, դուրսը արդէն մարդ ալ չկայ, կնիկս զաւակ պիտի բերէ. երբեմ տեսնեմ մա՞նչ է թէ աղջիկ:

ԻՆՔՍ

Կավոշ կը վերադառնայ Մարսէյլէն

Տկար եւ գեղեցիկ սեռը...



Յարդգողը

-Օրիո՛րդ, երբ ինձի հետ վայրկեան մը գաս, ապագադ կը շինեմ:
-Թոլորն ալ այդպէս ըսին, բայց... բան մըն ալ չշինեցին:

-Ա. ՄՐԲԱԶԱՆԸ.- Եւրոպայի նորընտիր առաջնորդէն լուր չկայ...կ'երեւի Էջմիածին մնաց...
-Բ. ՄՐԲԱԶԱՆԸ.- Մէջերնին խնդիր ծագեր է. բոլորն ալ իրենք գալ ուզեր են. ատոր վրայ Կաթողիկոսն ալ ըսեր է. "Նստեցէ՛ք տեղերնիդ":